

բարեւան... ցուցադրած էր երկու նկար. Հանգ-
Էլիզէի Սալոնին մէջ՝ Պ. Տիրանեան ուներ երկու
կտոր, որոնց մէջ «Արեւելեան բաղնիք» մը...
Պ. Հապանեան՝ որ երեք տարիէ ի վեր Հանգ-Էլի-
զէի Սալոնին մէջ կը ցուցադրէ ծովանկարներ, այս
տարի ալ ուներ «Եովն վրայ լուսնի ծագում» մը...
... Զորբոր Հայ արուեստագէտը, Պ. Հոսէնեան...
իւր «Խեղճ» նկարով... Ար կրկնէր «Արեւելքի»
վերջին խտրերը... «Եաջողութիւն կը մտղմենք մեր
տաղանդաւոր արգասիքներու»:

ԺԱՆՆԱԹԱՆ



ՔԱՂԱՔԱՅԱՆ ՏԵՍՈՐՔԻՆ

Վիսնա, 25 Յուլիս, 1896:

Ոռոտատուն: Մինչեւ ամառս կէ-
տերը բուխնալ քաղաքակրթնալ ազ-
գերու մտադրութիւնն ուղղուած էր այս
լայնածաւալ տէրութեան վրայ: Փառա-
ւոր նախնիութիւններ, որ սակայն «ան-
խառն», չմտացին: Բարձրագոյն կայսրիւննե-
րու խաչուցիչ ծայններու մէջ լուսեցան եւ
— ողբեր ու դառն կողողալաց ծայններ:
Դժբախտութեան մը զոր գացին 3 — 4000
անձրկ: Ընծանով պիտի միայն այս աղէտից
պատճառը: Մեծ հաւանականութեամբ
կ'ընդունուի թէ այսպիսի աղիթներու
մէջ զրգուած ժողովրդեան մը անասնո՞ւ
կիրքն էր, որ ժամ մը առաջ հաննիլ կը
փութար իւր երեւակայած երջանկու-
թեան, — այսինքն գրաւել կուժերէն
մէկը, որով ըստ իւր կարծեաց, ազատ
պիտի ըլլար, ուզած շափով նոյն օրերն
կապկաններն յաճախել, — սակայն կան
ուրիշ երկու կէտեր, որոնցմով ումնք
կատկամանաց սեւ քիծ մը կ'առնուն,
մանաւանդ եթէ մտածենք, թէ փոխանակ
քաշխուժի ժամը 11ին սկսեալ սկսած
է անհրաժեշտ ժամը 6ին, ուրեմն որո-
շնալ ժամէն 5 ժամ՝ յառաջ:

Պարսկատուն: Նոր Շահն սկսած
է քարենորոգութիւններ մտցնել իւր տէ-
րութեան մէջ, շարունակելով իւր մեծա-
նուն ճորն սկսածը: Թնեղանէ լուր կը
տրուի, թէ նոր նրովարտակով մը պաշ-
տօնապէս ծանուցուեցաւ, թէ հրապարա-
կական պաշտօններ, պատիւներ, զինուո-

րական տնտեսներ եւ շրանշաններ այ-
տուշետեւ պիտի քաշխուին ոչ թէ ար-
ժաթի փոխարէն, այլ միայն իւր վար-
ժատրութիւնն արժանեաց: Բաշիփի շոր-
ջանն անցած է կ'երեւայ՝ կ'ըսէ անկող-
նակալ լրագիր մը, Պարսկատունի հա-
մար: Անուսակի օրինակելի փորձիկ տէ-
րութիւն մը. ուր էր թէ շատ մը մեծ կար-
ծաւածներուն համար հաստատել կարե-
նայինը այս յառաջադիմութիւնը: —
Միւս կողմանէ զանակալութեան համար
մանր մունր խորտուներ կը ծանուցուին,
անշուշտ գուրկ են որ եւ իցէ նշանա-
կութիւն:

Չին: Լի-հունգ-չանգ փոխաբային
կամ լիագոր պաշտօնէին, Նորապ ըրած
ճանապարհորդութեան մեծ կարենորո-
թիւն կը արուի. զոր մենք պարզ պատեմ
աղիթ ծնած, քաղաքալսարանայն այցե-
լութիւն կ'անուանենք:

Առաքիւս-Հոնգսարիւս: Յուցահն-
դէսի փողահարութիւններն ու թմրակո-
ծութիւնները չկրցան գրաւել այն ուշա-
դրութիւնն, զոր ըրաւ Գոլուխովսկի իշ-
խանն իւր սրտապնդիչ եւ ոգեաթիչ խոս-
տովնութիւններով: Ամենանշանաւոր
խօսքը՝ զոր արտաքին գործոց պաշտօ-
նեայն պատուիրակութեանց ժողովին
առջեւ խօսեցաւ, էր հետեւեալը. «Արեւե-
լեան խնդիրն», նկատմամբ Շերուպայի
քննած քաղաքականութիւնն է — մեծ
նախադէպ մը իննետասներորդ դա-
րու...: Նոր քան մը չէր այս մզի հա-
մար, համուզած ենք թէ քառ անունը
տուաւ արդի քաղաքականութեանց. քայց
այսպիսի նշանաւոր անձի մի բերնէն —
չէինք յուսար: Ուրեմն եթէ թերութիւնը
ճանշուցեցաւ, ուղղելը դերին է:

Սպանիա: Այս յուսահատ տէրու-
թեան վիճակին վրայ պիտի չխօսինք.
այլ քանի մը թուանշաններ յառաջ պիտի
բերենք, ցոյց տալու համար թէ «Անոխ-
լեան գոհարն», ստանալու փառքը պիտի
կորսնցնէ Սպանիա: Տէրութեան «Expo-
ca», լրագիրը՝ 1895 Մարտէն մինչեւ 1896
Ապրիլին վերջը, Կուրա ուղարկուած զի-
նուորաց եւ ռազմական նիւթերու ընդ-
հանուր վիճակագրութիւն մը կու տայ:
Ըստ այսմ ուղարկուեցան, 40 զօրա-

պետ, 562 քարձր պաշտօնակալ, 4768 հասարակ սպայ, 3396 յիմնապետ, եւ 111.560 զինուոր. գումար 121.326 մարդ: 143 թնդանթ, 150,117 հրացան, 23,124 նննագունդ (granate), 61,778.368 փամփուշտ, 72.326 քիւղարամ փառոզ եւայլն եւայլն: Առաջիկայ երեք ամիսներու մէջ զաղդիական գործարան մը պիտի մատակարարէ 5 միլիոն փամփուշտ: Բաց ասկից նոր եւ հզօր թշնամիներ կը յառնեն Սպանիայի վրայ. Ներքին թշնամի, խոռվարարներն և անիշխանականներ, եւ արտաքին թշնամի Ամերիկէի ընտրելի զարեւոյցն Մակ-Կիլիէյ: Եթէ հաստատուի այս վերջնայն ընտրութիւնն, այն առեն ի գուր կը ձգնի Սպանիա Կուրայէն հնուացնել ամերիկեան մեկնակազէններն ու կամուտները: — “Կրակը կրակոյ մարեւ, սխալ մըն է, զոր քանի մը տէրութիւնք կը գործեն բայց սխալը միշտ զեղջ ունի հետը — ինքնակացի մը համար . . . :

Անգլիա: Դոնգուան բաւական չէ անգղիական վրէժնորդութեան, Սէլիսքորի յայտնեց իւր փորքն ընդ աղած խարտում է վերջնական նպատակը անգղիական եգիպտական արշաւանքին: Իսկ այս վերջինը նոր նեցուկ մըն է Անգլիայի եգիպտոսի վրայ ունեցած ազդեցութիւնն աւելի զօրացընելու. ասով շատ հեռուոր ժամանակի կը յետաձգուի “Եգիպտոսէն ելլելու”, ինդիքը: Ապրիլի քաղաքականին մէջ (Տես “Հ. Ամսօր.”) յիշատակուած “խանձի հոտը”, յայտնի մոռի յառաջ երևաւ: Կը բաղձանք որ մուխը շփոխուի ծռախի. փամս զի կը ստուգուի գուառացւոց ըսածը. ուր խանձի հոտ կայ, չուշանար անբոց մուխը. ուր կրակ կայ, բոց կը ծնանի, եւ բոցաւոր մուխը կ’անուանուի — ծուխ:

Բայիւսեան թերախղզի: Բուլգարիայի իշխանին իբր “իշխան”, ճանչցուելն ի վեր, մեծամեծ փոփոխութիւններ յառաջ եկան: Սեբեհա եւ Մոնտենէգրոյ աւելի եւս իրարու մերձենալու ջանքեր կ’ընեն: Կը ծանուցուի թէ մծտերու Նիկուլայի իշխանը պիտի այցելէ ի Բելգրադ, իսկ Սեբեհոյ թագաւորն Աղէքսանդր, ի Հէտինիէ: Այս լուրը մեծ ոգեւորութիւն ազդեց սեւ լերան ընակաջաց վրայ, փամս

զի բաւական ժամանակէ ի վեր այս երկու սերը ազգութեանց մէջ նախանձախնդրութիւն մը կը տիրէր:

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

- ՈՒՆԴԵՐԱՎԱՆ — Կալկասեան լերանց մէջ. 193:
ՄԱՏԵՆԱԳՐԱՎԱՆ — Նկատողութիւններ Նոյնէի պատմութեան վերաբերեալ. 197: — Փ. Բուգանդայ մասին. 200:
ԿԵՆՍԱԳՐԱՎԱՆ — Ստեփանոս բժիշկ Յովակիմեան Մանուկեանց (Պատկերաւ). 208:
ՄԱՏԵՆԱՍՏԱՎԱՆ — Պր. Գր. Խալաթեանցի “Հայկական վէպը”. 210: — Ժազուսն հայ տարեց, զրեց Դ. Ն. Ցաղաւարեան. 213:

ԱՅԼԵԻ ԱՅԼԵ

- ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 1. Պաւլիկեան աղանդաւորաց մասին: — 2. Գործք Պիղատոսի: — 3. Վիճաքանութիւն Տիգրանայ հայազգւոյ ընդ Եւստրատիոսի: — 4. Պատարագամատոյց Հայոց: — 5. Մ. Հմբին զրութիւններու նոր հրատարակութիւն. 218:

- ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԻ ԺԱՆԿՓՈՒՆԱ. 1. Ժխական դպրոցի նպատակ մը: — 2. Հայոց թիւն ի Կովկաս եւ Անդրկովկաս: — 3. “Մասիս” դարձեալ այլաւերակեալ: — 4. Պր. Գրիգոր Խալաթեանց: — 5. Ընթերցասիրութեան տարածումը ժողովրդեան մէջ: — 6. Հայ ուսանողներն յիշեցէր: — 7. Մովսէս Խորենացւոյ “Հայոց Պատմութեան” աշխարհացար թարգմանութիւնը: — 8. Համբարձման տօնն ի Հայս: — 9. Հին Աւետարան մը: — 10. Հինգ հազար ըութիւն կտակ: — 11. “Հ. Խմբագրութեան առաջարկութեան պատասխան”: — 12. Հայ երեսներն պատուութեամբ: — 13. Բագրի Մարգարեական ընկերութիւնը: — 14. Երջանաւարտներ: — 15. Հայ նկարիչներն ի Գաղղիա. 219:

ԲԱՆԱԳՐԱՎԱՆ ԵՆՈՒԹԻՒՆ 223:

ՀՐԱՏԱՐԱՐԵԾ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՅԻՆ ԽՄԱՐԱԳԻՐ

Գ. ԲԱՐՍԵՆԻ Գ. ՊԱՐՈՆՅ

Վ. Ե. Ն. Ո. Մ. Ի. Բ. Ռ. Բ. Ե. Ե. Գ. Պ. Բ. Ն.